ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Միտրոպոլիտ Մակարիյի իւր թեմ դառնալը։ Ռուսաց Սինոդի Աւագ Դատախազ Վոլժինի զեկուցման հիման վերայ, ապրիլի 21-ին Թագաւոր Կայսրը բարեհաճել է Սինոդի նիստերին յաճախող, Սինոդի անդամ և Մոսկուայի միտրոպոլիտ Մակարիյին արտօնել, Սինոդի առաջիկայ նստաշրջանի նիստերին յաճախելուց ազատ կացուցանել և իւր թեմն վերադառնալ։

* * *

Ռուսաց թեմերի յաւելումն։—Ռուսաց Սինոդում առանձին մի Յանձնաժողով դրաղուած էր ներկայ թեմերի թիւն աւելացնելու և փոխ-թեմակալների նոր աթոռներ հաստատելու խնդրով։ Իբրև հետևանք այդ դրաղումների մտադրութիւն կայ Ռոստովում Դ/վ նոր թեմական աթոռ հաստատել։

* * *

Մոսկուայի թեմակալի օգնական Տրիֆոն եպիսկոպոսին հանդստութեան վիճակ յատկացնելուց յետոյ, իբրև նորա յաջորդ մտադրութիւն կայ հրաւիրելու Վլատիմիրով աւագ քահանային, որ վանականութիւն կընդունէ։

* * *

Նիսի բարեհորոդութեան խնդիրը։—Ռուսական համայնքի ներքին կեանքի բարեհորոդութեան Յանձնաժողովի կազմած ծրագիրը, ինչպէս երևում է, Սինոդի մի քանի անդամների և թեմական առաջնորդների կողմից անընդունելի և անիրագործելի է համարւում։ Նորա միջնորդութիւն են յարուցել Սինոդի Աւագ-Դատախազ Ա. Ն. Վոլժինի միջոցով յետ վերցնելու Պետական Դումայ մտցրած օրէնսդրութեան այդ ծրագիրը։ Այդ միջնորդութեան մէջ մատնացոյց է արած, որ եկեղեցական բարեհորոդութիւնների իրականացումն ու կեանքի մէջ մուծելը պատճառ կլինի, որ քահանայական դասն ամբողջովին փախուստի կդիմէ իրենց այժմեան ծխերից։ Բազմաթիւ թեմերի մէջ, հարցասնդումներ են եղած

գործակալների միջոցով, այդ խնդրի նկատմամբ, և նոքա ամենքն ևս այն կարծիքն են յայտնել, որ համայնքների ստուար մեծամասնութիւնն այդ իրաւունքներն ստանալուց յետոյ՝ դժուար թէ ընտրէ իրենց այժմեան հովիւներին։

Այն ինչ,—ասուած է միջնորդութեան մէջ,—այդ քահանաները Դումայի անդամներ ընտրելու ժամանակ Կառավարութեան էական ծառայութիւններ են մատուցել և ընտրել են տուել չափաւոր—քաղաքական ծրագիրներ ունեցող պատգամաւորներ։ Այդ հանգամանքը, ըստ բարեկարգիչ քահանաների կարծիքի, որոնց հետ միանում է նաև թեմական առաջնորդների կարծիքը, այժմեան ծխական հոգևորականութեան համար շատ ծանր պայմաններ կստեղծի, եթէ Դումայի մշակած համայնքի օրինագիծն ընդունի և անցնի։ Մի կողմից ընտրելի հոգևորականները պէտք է համակերպին իրենց ծխի քմքին, իսկ միւս կողմից ի նկատի ունենան իրենց անմիջական, հոգևոր իշխանութեան պահանջները։

Այս նկատումներով Ս. Սինոդը կարևոր է համարել կազմել մի առանձին խորհրդակցութիւն Սինոդի անտեսական մասի կառավարիչ Օսէցկու նախագահութեամբ՝ պարզելու թեմական իշխանութեան հայեցակէտն ապագայ բարենորոգութիւնների հարցի նկատմամբ։ Խորհրդակցութիւնն առ այժմ մշակել է առանձին հարցերի մի թերթ, որ կուղարկուի ծխական քահանաներին նոցանից լիուլի պատասխաններ ստանալու զանազան հարցերի ու խնդիրների մասին, որպիսի հարցերի մէջ մտնում է նաև իրենց ծխականների բնոյթագծերի որակումը։ Եթէ այդ հարցուփորձի թերթերի հետևանքները բացասական լինին հոգևորականութեան կողմից, այն ժամանակ ենթադրւում է, թէ Սինոդը յետ կպահանջէ Պետական Դումայից ապագայ բարենորոգումների ծրագիրը մինչև նորա հաստատութիւն գտնելը, որին, ինչպէս յայտնում են, արդէն նախարարների խորհրդի նախագահն իւր համաձայնութիւնն է տուել սկզբունքային տեսակէտով։

* *
*

Եպիսկոպոսական ժողով ծխի բարենորոգութիւնների համար։—Սինոդի նախանդամ Կիևի Միտրոպոլիտ Վլադիմիրի անունով եպիսկոպոսների ժողովի կողմից ստորագրած է հեռագիր, որին ստորագրել են Վլադիմիրի եպիսկոպոս Ալէքսիյ, Ռեազանի եպիսկոպոս Դմիտրիյ, Վոլոգդայի եպիսկոպոս Ալէքսանդր, Կոստրոմայի եպիսկոպոս Եւգենիյ, Մուրոմի եպիսկոպոս Միտրոֆան, Իւրևի եպիսկոպոս Եւգենիյ, Սուզդալի եպիսկոպոս Պաւել, Վլադիմիրի հոգևոր դպրոցի տեսուչ աւագ-քահանայ Բոգոսլովսկիյ, մայր ե-

կեղեցու աւագ-քահանայ Ֆիլիպինսկիյ, այլ և 7 աւագ-քահանայ և երեք քահանայ, հետևեալ բովանդակութեամբ.

«Վլադիմիրում ժողովուած արքեպիսկոպոսները, քահանաները և աշխարհիկ անձեր երկար, ուշադիր և բազմակողմանի քննադատութեան ենթարկելով Գրիգորեան եկեղեցու բարենորոգութեան հետ կապուած հարցը, եկան միաբան եզրակացութեան, որ համայնական կեանքին կենդանութիւն ներշնչելու խնդիրը պէտք է կապուած լինի միայն աստուածպաշտութեան բարելաւման, եկեղեցական երգեցողութեան կանոնաւորման, հոգևորականների անդուլ կենդանի քարոզչութեան, եկեղեցական-ծիսական բարեգործական շրջանի ընդլայնման, ինչպէս և ծխի լուսաւորութեան դաստիարակութեան գործին ծառայող հաստատութիւնների առարկաներին։ Իսկ ծխականներին՝ իրենց սեփական ընտրութեամբ եկեղեցական դասի ընտրութեան, եկեղեցու դրամի և կալուածների կարգադրութեան հարցերի նկատմամբ ժողովը այն եզրակացութեան եկաւ, որ դոքա կործանիչ կարող են լինել եկեղեցու բարեկարգութեան տեսակէտից։ Եկեղեցու տեսակէտից այս կարևոր, օգտաւէտ և անհրաժեշտ հարցերի նկատմամբ արքեպիսկոպոսների, հոգևորականների և աշխարհիկների ժողովը անհրաժեշտ ճանաչեց բուն-եկեղեցական բարենորոգութիւնների օրէնսդրական ուրուագիծը միանգամայն հանել ոչ-դաւանական Գետական Դումայի իրաւասութիւնից և այն կենդրոնացնել միայն Եկեղեցու օրէնսդրական իշխանութեան ձեռքը»։

Արքեպիսկոպոսների և քահանաների այդ հեռագիրը, ուղղուած Կիևի միտրոպոլիտ և Սինոդի նախանդամ Վլադիմիրին, ինչպէս ասում են, կապ ունի Սինոդի Աւագ-դատախազի Սուզդալի ճանապարհորդութեան հետ։

Ա. Ն. Վոլժինի Վլադիմիր և Սուզդալ եղած ժամանակ մասնաւոր խորհրդակցութիւն է կատարուած, նորա մասնակցութեամբ, արքեպիսկոպոսների շրջանում, ուր և որոշուած է հեռագրի առաքման հարցը։

Գրիգորեան եկեղեցու ծխի օրինագծի հարցը վերջնականապէս կլուծուի մօտ ժամանակներս։ Աւագ-դատախազը մինչև այժմ դեռ ևս Գետական Դումայից յետ չէ վերցրել Սինոդի առաջարկած օրինագիծը։ Անձնական նորա հայեցակէտը հակառակ չէ այն տեսակէտին, որ հոգևորականութիւնը ընտրուած լինի ծխի կողմից և որ համայնքն իրաւունք ունենայ եկեղեցու գոյքի վերայ կարգադրութիւններ անելու։ Այս վերջին խնդիրների նկատմամբ Սինոդի անդամների և Աւագ-դատախազի հայեցակէտերը կատարելապէս իրար համաձայն են։

Պետրոգրադի միտրոպոլիտ Գրիգորիին է միայն, որ ըստ ա-

մենայնի կողմնակից է Պետական Դումայի մշակած փոփոխութիւն-ներին։ Ծխի իրաւասութեան հարցը, հաւանօրէն, կորոշուի Սինոդի մօտ նիստերից մէկում։

Կարող է և այսպիսի ձևակերպութիւն ստանալ. միջին ճանապարհ բռնած լինելու համար.— Ծրագիրը կը բաժանուի երկու մասի, և այն հարցերը, որ բուն եկեղեցական ինդիրներին են վերաբերում, գուցէ Սինոդի կազմած ծրագրով օրէնսդրական բնոյթ կստանան 87 յօդ. հիման վերայ, իսկ մնացածը՝ սովորական օրէնսդրական հղանակով։ Այդ միջին ճանապարհը, որի հեղինակն է համարւում աւագ-դատախազ Ա. Ն. Վոլժինը, ընդունուած է, ի նկատի ունենալով, մի քանի աղդեցիկ արհիների բռնած հակառակ դիրքը դէպի օրինագիծը, որոնք Սինոդի նիստերից մէկում, մասնաւոր խորհրդակցութեամբ, եկել են այն եզրակացութեան, որ եթէ Դումայի փոփոխութիւնները ընդունուելու լինեն, իրենք ստիպուած կլինեն միջնորդելու, որ ազատ համարուեն Սինոդի անդամակցութեան պարտաւորութիւնից։

* *
*

Միտրոպոլիտ Մակարիոս բոլորովին հեռանում է գործերից։— Մոսկուայի միտրոպոլիտ Մակարիի հանդստութեան ելնելու հարցը վճռուած է վերջնականապէս։

Ինչպէս հաղորդում են, միտրոպոլիտ Մակարիոս այդ հարցը յարուցել էր այնքի առաջ ունենալով այն ճնշումը, որ առաջ էր եկել Սինոդի կողմից նորա վերայ, հ. Վլատորդովի գործի նկատմամբ։

Բայի գործանից միտրոպոլիտ Մակարիի հանդստութեան քաշուելու որոշման վերայ պակաս ազդեցութիւն չէ ունեցել Սինոդի՝ հ. Վլատորդովին արժանացնել եպիսկոպոսական աստիճանի, նշանակելով Մոսկուայի թեմի քորեպիսկոպոս, իրաւունք տալով միտրոպոլիտի բացակայութեան ժամանակ կատարել միտրոպոլիտական գործերը։ Սինոդը Մոսկուայի թեմակալի այդ հարցի առաջին քննութեան ժամանակ հակառակ եզրակացութեան էր եկել։ Այն ժամանակ միտրոպոլիտ Մակարիոս հարցին տուել էր սուր կերպարանք,— կամ նորա միջնորդութիւնը պէտք է յարգուի և կամ ինքը հրաժարական կը տայ և պաշտօնից կը քաշուի։ Սինոդի աւագ-դատաւորի առաջարկութեամբ բռնուած է միջին ճանապարհ,— տալ հ. Վլատորդովին եպիսկոպոսական աստիճան և նշանակել նորան Մոսկուայի թեմի քորեպիսկոպոս, առանց իրաւունք տալու վարել Մակարիոս միտրոպոլիտի բացակայութեան ժամանակ նորա գործերը։

* *
*

Մոսկուայի թեմի աւագ փոխ-թեմակալ, Դմիտրովսկիյի առաջնորդ, Տրիֆոն եպիսկոպոսը, հրաժարուում է պաշտօնից և քաշուում հանգստութեան և, արդէն, նշանակուած Սինոդին անմիջապէս ենթակայ նոր Երուսաղէմ կոչուած Վօսկրեսենսկիյ ստաւրոպիգիալ (Ставропигіальн.) վանքի կառավարիչ։

Պատերազմի շրջանում կրած նեղութիւնների պատճառով առողջութիւնը բոլորովին քայքայած լինելով, նա ստիպուած էր հրաժարուիլ Մոսկուայի միտրոպոլիտութեան կառավարութիւնից։ Այդ պատճառով և նա ստիպուած է հրաժարուիլ նաև թեմական գործերից, իբրև Մոսկուայի աւագ-քորեպիսկոպոս և հանգստանալու երթալ։

* *
*

Միտրոպոլիտութեան երջանցներ։ — Ռուսաց Սինոդի վերջին հերթական նիստերից մէկում որոշուած է բաժանել ամբողջ Ռուսաստանը ութ միտրոպոլիտական շրջանի, — Պետրոգրադի, Մոսկուայի, Վիլնայի, Կազանի, Կիևի, Տօբոլսկի, Իրկուտսկի և Հովկասեան։ Նոր միտրոպոլիտները Սինոդի նիստերին կհրաւիրուեն հերթով, իւրաքանչիւր տարի։ Միտրոպոլիտների մօտ կսահմանուի արքեպիսկոպոսական խորհուրդներ։

Առ այժմ անորոշ է, թէ ինչ եղանակով կմուծուի այդ նոր հարցի լուծումը։ Սինոդի աւագ-դատախազ Վօլժինն անհրաժեշտ է համարում օրէնսդրական ճանապարհով լուծել հարցը։ Արքեպիսկոպոսների մի խմբակցութիւն, որոնց գլուխ է կանգնած Վլադիմիր միտրոպոլիտը, ընդհակառակն, այն միտքն են առաջ մղում, թէ այդ ծրագիրն առաջ տանելն ու հարցի լուծումը կախուած պիտի լինի միայն եկեղեցու բարձրագոյն վարչութեան իրաւասութիւնից։ Այդ հարցը կը լուծուի վերջնականապէս Սինոդի մօտիկ նիստերից մէկում։

* *
*

Վարչական շրջաններում խօսում են, որ Սինոդի աւագ-դատախազ Ա. Ն. Վօլժինը ի մօտոյ թողնում է իւր պաշտօնը։

* *
*

Ամուսնալուծական դատավարութեան բարեփոխման մասին մշակած օրինագիծը, որի մասին գրուած է «Արարատի» նախորդ համարում, արդարադատութեան նախարար Ա. Ա. Խվոստովը ուղարկել էր Սինոդի աւագ-դատախազին վերջնական եզրակացութեան։

Սինոդում կազմուած այդ խնդրով զբաղուող յատուկ Յանձնաժողովը, քննութեան առնելով առաջարկուած օրինագիծը, համարեա ամբողջապէս հաւանելի և ընդունելի գտաւ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Անգղիական եկեղեցու համայքներն այցելելու և եկեղեցիների վիճակին ի մօտոյ ծանօթանալու համար Հիւսիսային և Միջին Եւրոպայի Անգլիկան եկեղեցու Եպիսկոպոս Հերբերտ Բարրին, մայիսի 10-ին այցելեց Պետրոգրադի Պիտիրիմ միտրոպոլիտին։ Անգլիկան Եպիսկոպոսին ուղեկցում էր Պրաւօսլաւ եկեղեցուն քաջ ծանօթ և արևելեան ու անգլիկան եկեղեցիների սերտ յարաբերութեամբ իրար մօտեցնելու գաղափարն երկար ժամանակից ի վեր արծարծող Միստեր Բիկերդը։

Միտրոպոլիտ Պիտերիմն ընդունեց իւր Անգղիացի հիւրին ընդունելութեան դահլիճում մեծ սիրով և ջերմ համակրութեամբ, որի հետ երեք անգամ ողջարգուրուեցաւ։ Միտրոպոլիտական երգչական խումբը երգեց անգղիական օրհներգը, որից յետոյ Հերբերտ Եպիսկոպոսի առաջարկութեամբ, երգեցին ռուսական օրհներգը։

Բարրի Եպիսկոպոսը յանուն Անգղիական Եպիսկոպոսական եկեղեցու իւր պաշտօնակիցների շնորհաւորեց Պիտիրիմի միտրոպոլիտութիւնը՝ մայրաքաղաքի թեմում։

Երեկոյեան ժամը 8-ին Միտրոպոլիտ Պիտիրիմը փոխ-այցելութեան գնաց անգղիացի Եպիսկոպոսին։

* * *

Հերբերտ Բարրի Եպիսկոպոսը Պետրոգրադի անգղիական դեսպան սրը Ջորջ Բիսկընանի հետ Մոսկուայ գալով, մասնակցելու Մոսկուայի, ի պատիւ անգղիական դեսպանի կազմած ընդունելութեան և հանդէսներին, այցելեց մայիս 12-ին, Մոսկուայի անգղիական եկեղեցու աւագերէց Ֆ. Ն. Նորթի հետ Վերափոխման Տաճարը, և ներկայ եղաւ Մոսկուայի Միտրոպոլիտ Մակարիի մատուցած պատարագին և գոհաբանական մաղթանքին։

Նոյն օրը Հերբերտ Եպիսկոպոսն ընդունուեցաւ Մեծ իշխանուհի Ելիզաւէտա Ֆէօդորոֆնայի կողմից։

Երեկոյեան, ժամը 8-ին, այցելեց Մոսկուայի միտրոպոլիտ Մակարիին, Տրոյիցկի վանատան մէջ։